

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀՈՎԱԵՓՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԳԱԳԻԿԻ

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ԴՐՕՇԱԿ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ
(1890-1908 ԹԹ.)**

Է.00.01- «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ներսիսյան Աշոտ Արտաշեսի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մովսիսյան Ֆելիքս Վազգենի

պատմական գիտությունների թեկնածու
Կարապետյան Արմեն Հովակիմի

Առաջատար կազմակերպություն՝

**Խ. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարան**

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2024 թ. նոյեմբերի 8-ին, ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. հոկտեմբերի 8-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ


Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: 19-րդ դարի վերջին թուրքական ծանր լծի տակ կեղեքող ու կոտորող հայ ժողովուրդը անհավասար պայքարի դուրս եկավ իրեն հալածող, հարստահարող, հզոր թշնամու դեմ իր կենսական իրավունքները իրացնելու համար: Այդ պայքարն առաջնորդեցին ազգային քաղաքական կուսակցությունները, մասնավորապես, տարիների անդուլ պայքարի ընթացքում ազատագրական պայքարի ռահվիրան դարձավ Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը: Դաշնակցության օրգանը հանդիսանում էր «Դրօշակ» պարբերականը, որի մատուցած առատ տեղեկություններն ու պայքարի թոհուբոհում հայրուկների ու ազատագրական պայքարի գործիչների նամակներն ու տեղեկությունները ենթարկել ենք համակողմանի քննության: Ներկայացված է պայքարի տարեգրությունը, ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակը, Մեծ տերությունների կողմնակալ ու շահադիտական մոտեցումն ու անհանդուրժողականությունը հայոց ազատագրական պայքարի նկատմամբ, որի վառ արտահայտումը հայ ժողովուրդը տեսնում է նաև մեր օրերում: Այսօր հայ ժողովուրդը կանգնած է քաղաքական երկընտրանքի առջև: Կարևոր է ոչ շատ հեռավոր անցյալի պատմաքաղաքական իրադարձությունների խորքային ընկալում, սթափ մոտեցմամբ և ապակուսակցական պատմագիտական հայեցակարգի մշակում, որոնցում իր կարևորագույն բաժինը կարող է ունենալ «Դրօշակ»-ի մատուցած առատ նյութի քննությունը: Արցախյան հիմնախնդրի, հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրներում, ինչպես նաև մեր հարևանների և գերտերությունների հետ հարաբերություններում պետք է լինենք չափազանց զգուշավոր, ճշտորեն արժևորենք այն, ինչն իսկապես համահունչ է մեր շահերին: Այս ամենից ելնելով՝ կարևոր ենք համարում 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի և դրա գլխավոր առաջնորդ կուսակցության՝ ՀՅ Դաշնակցության անցած պատմական ուղու խորքային ընկալումը, որը հանգեցրեց սեփական ուժերին ապավինելու ռազմավարության ձևավորմանը, բայց ուշացումով:

Ատենախոսությունում ներկայացնելով արևմտահայ ազգային-ազատագրական շարժման արտացոլումը Դաշնակցության օրգան հանդիսացող «Դրօշակ» պարբերականում, աշխատել ենք լուծել հետևյալ խնդիրները՝

ա) իրադարձությունները ներկայացնել համակողմանի, հնարավորինս անաչառ, այս կամ այն նշանակալի իրադարձությունը ներկայացնել հիմնվելով մասնակիցների կամ ականատեսների վկայությունների, հուշերի, նամակների պահպանված փաստաթղթերի վրա:

բ) Անկախ ՀՅԴ որդեգրած մարտավարությունից ու նրա արդյունավետության աստիճանից ներկայացնել ազգային-ազատագրական պայքարի նվիրյալների հերոսական պայքարը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները:

19-րդ դարի վերջին քառորդը հայոց պատմության կարևոր, վճռական ու բախտորոշ ժամանակահատվածներից է, երբ դարավոր ընդարմացումից սթափված հայ ժողովուրդը ոտքի ելավ ազատագրական պայքարի: Հայոց վերագարթոնքն աստիճանաբար վերածեց ազգային-ազատագրական պայքարի, որն անցել է զարգացման մի քանի փուլեր:

• Հայրենիքից դուրս գործող անհատ մտավորականների գործունեության արդյունքում ձևավորվեց լուսավորչալ նոր սերունդ, որը երկնեց ազատագրական պայքարի գաղափարախոսությունը,

• Տեղի ունեցավ այդ գաղափարախոսության տարածումը երկրում,

• Ավելի ուշ երկրի տարբեր մասերում ձևավորվեցին նաև ազատագրական խմբակներն ու քաղաքական կուսակցությունները:

Ատենախոսության նպատակն է այս ամենը և գլխավորապես արևմտահայ ազգային-ազատագրական պայքարը վերլուծել ըստ Հ.Յ. Դաշնակցության հանրահայտ օրգան հանդիսացող «Դրօշակ» պարբերականի սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող տեղեկությունների և տեսական հոդվածների վերլուծությունների, դրանց համադրական քննությամբ: Մեր հիմնական խնդիրն է .

ա) Վերլուծել այստեղ տեղ գտած հայրենամտեր պայքարին նվիրված հիշատակության արժանի հերոսական դրվագները,

բ) Անաչառ և փաստերով հիմնավորված գնահատական տալ պայքարի ընթացքում թույլ տրված բացթողումներին,

գ) Անդրադառնալ տվյալ ժամանակահատվածում պայքարի համար ընտրված մեթոդների և միջոցների գործարկմանը,

դ) Պայքարի իրագործմանը նպաստող կամ խոչընդոտող միջազգային իրադրության պատեհությանը,

ե) Ներկայացնել հայդուկային պայքարն ըստ փուլերի և համեմատության մեջ դնել այդ մեթոդի իրագործման համար ներդրված միջոցներն ու արդյունավետությունը,

զ) Հանգամանալից անդրադառնալ Դաշնակցության կողմից որդեգրած որպես պայքարի ծայրահեղական մեթոդ հանդիսացող ահաբեկման մարտավարությանը, դրա արդյունավետությանն ու հետևանքներին,

է) Ծանոթանալ արևմտահայ ազգային-ազատագրական պայքարին նվիրված դաշնակցական մեծանուն գործիչների ժամանակի իրադարձությունների վերլուծություններին, մտորումներին ու մտահոգություններին, որոնք առկա են «Դրօշակ»-ում տարիներ շարունակ հրատարակվող հոդվածների տեսքով:

Հետազոտության մեթոդաբանությունն ու գիտական նորույթը:

Աշխատանքը շարադրվել է պատմաքննական և պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ: Փաստերի համադրման միջոցով սկզբնաղբյուրների և գրականության քննական վերլուծությունը կատարվել է՝ պահպանելով պատմականության ու անաչառության սկզբունքները:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ այստեղ «Դրօշակ» պարբերականի առատ սկզբնաղբյուրների, ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ տեսական հոդվածների, նամակների և այլ նյութերի, ինչպես նաև հայ ազատագրական պայքարին առնչվող միջազգային վերաբերմունքին առնչվող հրապարակումների համադրման քննությամբ փորձ է արված պատմագիտական հստակ հայեցակարգեր մշակել հայ ազգային-ազատագրական պայքարի մի տևական ժամանակահատվածի վերաբերյալ, թույլ տալ այդ պայքարի էվոլյուցիոն զարգացումը, մարտավարության և ռազմավարության փոփոխությունները՝ իրենց նպատակահարմարության նկատմամբ վերաբերմունքով, որն ինքնին նորություն է ազգային-ազատագրական պայքարի գիտական գնահատականների առավել ամբողջական դարձնելու տեսանկյունից:

Ատենախոսության գործնական-կիրառական նշանակությունը:

Ատենախոսությունը կարող է օգտագործվել բուհական կրթական համակարգում Հայոց պատմություն, Հայ ազատագրական պայքարի պատմություն դասընթացների շրջանակում: Հետազոտությունը կօգնի իրականացնել նաև հայ-թուրքական արդի գործընթացների ու փոխհարաբերությունների կարգավորման վերլուծություն և հնարավոր կանխատեսում:

Հետազոտության ժամանակագրական և տարածքային շրջանակները:

Ուսումնասիրության ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 1890-1908 թթ.:

1890-ական թվականներին ձևավորվում և պատմության թատերաբեմ են իջնում ազգային կուսակցությունները: Մեր ուսումնասիրության առանցքում Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունն է՝ հիմնադրված 1890 թ., որը և հիմնադրումից որոշ ժամանակ անց գլխավում է արևմտահայ ազգային-ազատագրական պայքարը, որը հեղինակները պայմանականորեն բաժանում են 1890-1894 թթ., որը Դաշնակցության, որպես կուռ կառույցի ձևավորման, «Դրօշակ»-ի հիմնման, կուսակցական կանոնադրության հաստատման շրջան է: Երկրորդ շրջանն ընդգրկում է 1894-1898 թթ.: Այս շրջանը ազատագրական պայքարի ամենաթեժ բախումների, հայդուկային կոիվների շրջանն է (Սասունի՝ 1894 թ. ինքնապաշտպանություն, Չեթունի՝ 1895-1896 թթ. ապստամբություն, Վանի՝ 1896 թ. ինքնապաշտպանություն, Օսմանյան բանկի գրավումը (1896 թ.), Խանասորի արշավանք): Երրորդ շրջանն ընդգրկում է 1898-1904 թթ., որը հատկանշվում է Դաշնակցության ռազմավարության և մարտավարության փոփոխմամբ՝ հայդուկային կոիվներից անցում դեպի ընդհանուր ապստամբության կազմակերպումն ժողովրդի գաղտնի զինման քաղաքականություն: Եվ չորրորդ շրջան որն ընդգրկում է 1904-1908 թթ., որը սկսվում է Սասունի՝ 1904 թ. ինքնապաշտպանությամբ, շարունակվում է հայդուկային պայքարից ի սպառ հրաժվելու քաղաք-կանությամբ և 1908 թ. Օսմանյան Սահմանադրության ընդունմամբ Դաշնակցության մարտավարության փոփոխմամբ՝ այն է՝ կուսակցությունը հրաժարվեց ժողովրդին զինելու գործելաոճից և հավատալով սահմանադրությանը, լծվեց նրա պաշտպանությանն ու հայկական բարենորոգումների իրականացման ծրագրին:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը ու ուսումնասիրվածության աստիճանը.

Ատենախոսության շարադրանքի ընթացքում «Դրօշակ»-ի նյութերից բացի, օգտվել ենք նաև արխիվային սկզբնաղբյուրներից, այլ պարբերականներից («Հայրենիք», «Վեմ»), հրատարակված մի շարք հուշագրություններից, ՀՅԴ հիմնադիր ու նշանավոր գործիչների կյանքն ու գործունեությունը ներկայացնող փաստաթղթերի ժողովածուներից և պատմագիտական աշխատություններից: Ատենախոսությունում մեծ տեղ է հատկացված նաև ՀԱԱ ֆոնդերից արխիվային նյութերին: Օգտագործած նյութերի այս առատությունը օգնում են ավելի խորը պատկերացում կազմել 20-րդ դարասկզբին Արևմտյան Հայաստանում ծավալված իրադարձությունների մասին:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազգային-ազատագրական պայքարին՝ մասնավորապես ՀՅԴ գործունեությանը նվիրված լավագույն սկզբնաղբյուր կարելի է համարել «Դրօշակ»-ը, որի հետ զուգահեռ ուսումնասիրել ենք այլ փաստաթղթերի ժողովածուներ, պատմագիտական աշխատություններ, որոնք գնահատելիս անհրաժեշտ է տարբերակել արտերկրում հրատարակված գրականությունն ու սկզնաղբյուրի նշանակություն ունեցող նյութերը և հայրենական պատմագիտության կողմից հրատարակված

ուսումնասիրությունները: Պատմական այդ ժամանակահատվածի, ազգային-քաղաքական կուսակցությունների և ականավոր գործիչների գործունեության վերաբերյալ անհամեմատ ավելի հարուստ գրականություն է ստեղծվել, առավելապես հուշագրությունների տեսքով, սխյուռքահայ պատմագրության մեջ, որն էլ միանգամայն օրինաչափ է ու հասկանալի: Հայաստանի Հանրապետության անկումից հետո բազմաթիվ գործիչներ, հարկադրված հեռանալով հայրենիքից, տարագրության տարիներին գրել ու հիմնականում ՀՅԴ «Դրօշակ» պաշտոնաթերթում, «Հայրենիք», «Վեմ» ամսագրերում կամ առանձին գրքերով ու գրքուկներով հրատարակել են իրենց հուշերը:

ՀՅԴ գործունեությանը նվիրված փաստաթղթերի առաջին ժողովածուն Ս. Վրացյանի կազմած ու խմբագրած «Դիան Հ.Յ. Դաշնակցութեան» սովյարածավալ երկհատորներն են: Այդ ժողովածուներում ներկայացված են ՀՅԴ տարբեր համաժողովների արձանագրությունները, ինչպես նաև ՀՅԴ հիմնադիրների և ականավոր գործիչների նամակները¹:

Ատենախոսության համար որպես սկզբնաղբյուր ծառայել է «Դրօշակ» պարբերականը, որի էջերում տարիներ շարունակ իր արտացոլումն է գտել արևմտահայ ազգային-ազատագրական պայքարը: Այն հարուստ է ազատագրական մարտերի տեսարանների նկարագրությամբ, հայրուկների և դաշնակցական այլ գործիչների նամակագրական նյութերով: Առանձին հետաքրքրություն և արժեք են ներկայացնում «Դրօշակ»-ում տարիներ շարունակ տպագրվող «Այբուբեն», «Կովկասյան Խաբրիկներ» հոդվածա-շարերը, որոնք բացահայտում են հայ երիտասարդության համար համազգային պայքարի անհրաժեշտությունը, Մեծ տերությունների՝ հատկապես ցարական Ռուսաստանի անհանդուրժողականությունը Հայոց անկախության գաղափարի նկատմամբ²:

Որպես սկզբնաղբյուր արժեքավոր են ՀՅԴ 60 ամյակին նվիրված Ս. Վրացյանի կազմած մեկ այլ՝ «Վաթսունամեակ (1890-1950)» և «Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան (1890-1950)» գրքերը³:

Արևմտահայ ազատագրական պայքարի պատմությունն ուսումնասիրելու համար անտարակույս մեծ արժեք է ներկայացնում Հ. Տասնապետյանի խմբագրությամբ հրատարակված «Նիսիեր ՀՅԴ Դաշնակցության պատմութեան համար» քառահատոր ժողովածուն⁴:

Այդ ժողովածուում առավել ամփոփ ներկայացված են Հ.Յ. Դաշնակցության Ընդհանուր Ռայոնական և Շրջանային ժողովների նյութերը, որոնք ի թիվս բազում արմատական նշանակություն ունեցող հարցերի, բնութագրում են նաև Արևմտյան Հայաստանի ազատագրության կուսակցության ռազմավարությունն ու մարտավարությունը:

Հ.Յ. Դաշնակցության 100-ամյակի կապակցությամբ ՀՅԴ Բյուրոն հրատարակել է «Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (քառահատոր շարք)» ժողովածուն, որտեղ ներկայացված են մի շարք հեղինակների, մասնավորապես Մ. Վարանդյանի, Ռուբենի և Կ.Սասունու գործերից առանձին հատվածներ, որոնք

¹Տե՛ս Վրացեան Ա., Դիան Հ.Յ. Դաշնակցութեան հ. 1, հ. 2, Պոսթըն, 1934, 1938, 1985:

²Տե՛ս «Դրօշակ» պարբերական, սկսած 1891թ.-ից մինչև 1910թ.:

³Տե՛ս Վրացեան Ա., Վաթսունամեակ(1890-1950), Պոսթըն, 1950, Յուշապատում Հ.Յ. Դաշնակցութեան (1890-1950), Պոսթըն, 1950:

⁴Տե՛ս Նիսիեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Պէյրոս, հ.Ա, 1984, հ. Բ, 1985, հ.Գ, 1976, հ.Դ, 1982:

վերաբերվում են ՀՅԴ պատմության տարբեր ժամանակահատվածներում արևմտահայ նշանավոր գործիչների գործունեության լուսաբանմանը⁵:

Օգտագործել ենք Հ. Տասնապետյանի խմբագրությամբ հրատարակված ՀՅԴ հիմնադիրների՝ Քրիստափոր Միքայելյանի, Սիմոն Զավարյանի և Ռոստոմի կյանքն ու գործունեությունը ներկայացնող սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող նյութերի ժողովածուները, որտեղ ամփոփված են նրանց նամակներն ու գործերը⁶:

Թեմայի համար աղբյուրագիտական նշանակություն ունի Խաժակ Տեր-Գրիգորյանի կազմած ՀՅԴ անվանի գործիչ Հոնան Դավթյանի կյանքն ու գործունեությունը լուսաբանող «Յոնան Դավթեան» գրքերը, որտեղ ներկայացված են նաև նրա հոդվածներն ու նամակները⁷:

Այդ ժամանակահատվածի վերաբերյալ բավականին առատ են հուշագրական բնույթի սկզբնաղբյուրները, որոնք լրացրել են այն բացը, որն անհնար է փակել սուկ արխիվային նյութերով: Նմանաբնույթ սկզբնաղբյուրներից գնահատելի են Ռուբեն Տեր-Մինասյանի հուշեր, ատենախոսությունում քննարկվող խնդիրների լուսաբանման նպատակով օգտագործել ենք այդ հուշերի առաջին վեց հատորները⁸:

Ռուբենի հուշագրությունների արժեքը կայանում է նաև նրանում, որ նա այնտեղ հանդես է գալիս ոչ միայն սուկ դեպքերի մասնակից, հուշագիր, այլև հետազոտող և վերլուծաբան: Նրա շատ տեսակետներ ունեն արդիական հնչեղություն և պատմագիտական հայեցակարգերի արժեք:

Տարոնում ՀՅԴ գործունեության, նրա մարտավարության վերաբերյալ պատկերացումներն առավել ամբողջական են դարձնում Սմբատ Բորոյանի հուշերը⁹:

Արժեքավոր տեղեկություններ են պարունակում նաև Անդրանիկի հուշերը¹⁰

Որպես դեպքերի անմիջական մասնակից, Անդրանիկն իր հուշերում մեծ տեղ է հատկացնում հատկապես ժողովրդի մեջ իրենց՝ ֆիդայիների կողմից իրականացվող աշխատանքների և դատական գործերի լուսաբանմանը:

Կարևոր սկզբնաղբյուր է Սարգիս և Միսակ Բդեյան եղբայրների գործը¹¹:

Միսակ Բդեյանի հուշերում առավելապես նկարագրված են Սասունի 1894 թ. ինքնապաշտպանությանը հաջորդող իրադարձությունները մինչև 1908 թ. Սահմանադրությունը:

Արժեքավոր են Վահան Փափազյանի (Կոմսի) հուշերը¹²: Հեղինակը ներկայացնում է ՀՅԴ մղած ազգային-ազատագրական պայքարը մեծ տերությունների վարած

⁵ Տե՛ս Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Քառահատոր շարք), հ. Ա, Բ, Գ, Դ, Աթէնք, 1990:

⁶ Տե՛ս Տասնապետեան Հ., Քրիստափոր Միքայելյանի նամակները, Պէյրոս, 1993, Սիմոն Զավարեան, մահուան եօթանասունամեակին առթիւ, հ. Ա, Պէյրոս, 1983, հ. Բ, Պէյրոս, 1992, հ. Գ, Անթիաս, 1997, Ռոստոմ, մահուան եօթանասունամեակին առթիւ, Պէյրոս, 1979, Ռոստոմ, Նամականի, մահուան ութսունամյակին առթիւ, Պէյրոս, 1999:

⁷ Տե՛ս ԅոնան Դավթեան, հ. Ա, Աթէնք, 1988:

⁸ Տե՛ս Ռուբեն, Հայեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Պէյրոս, 1983, հ. 2, 1973, հ. 3, 1974, հ. 4, 1975, հ. 5, 1977, հ. 6, 1977:

⁹ Տե՛ս Բորոյան Ա., Սկրտիչ Երիցանց, Զօրավար Սմբատի յուշերը, հ.Ա, Փարիզ, 1936:

¹⁰ Տե՛ս Անդրանիկի յուշերը, Բոստոն, 1930:

¹¹ Տե՛ս Բդեյան Սարգիս և Միսակ, Հարազատ պատմություն Տարօնոյ, Գահիրե, 1962:

¹² Տե՛ս Փափազյան Վ., Իմ յուշերը, հ. 1, Պոսթըն, 1951:

քաղաքականության և մյուս կուսակցությունների գործունեության պատմության հենքի վրա: Լինելով հայ ազատագրական պայքարում ՀՅԴ կարևոր դերակատարներից մեկը՝ Կոմսը, չի ընկնում ծայրահեղությունների մեջ և որոշ դեպքեր արժեվորելիս ցուցաբերում է քննադական-վերլուծական մոտեցում: Նա չի խուսափում նաև ՀՅԴ որոշ գործողությունների նկատմամբ քննադատական մոտեցումից, որն ինքնին գնահատելի է:

ՀՅԴ պատմության ուսումնասիրության համար ուշագրավ տեղեկություններ են պարունակում Արամայիսի (Միսսք Տեր-Դավթյան) հուշերը: Լինելով իր նկարագրած դեպքերի անմիջական մասնակիցը, նա ներկայացնում է մի շարք մարտական գործողությունների, մասնավորապես «Խանասորի արշավանքի» կազմակերպման, «Վանի պատիկ կոիվներ»-ի և 1905-1906 թթ. հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ՀՅԴ կառույցների, գործիչների դիրքորոշման և հայ մարտական ուժերի գործողությունների մանրամասները¹³:

Որպես սկզբնաղբյուր առանձնահատուկ նշանակություն ունի Բիթլիսի հոգևոր թեմի առաջնորդ Եղիշե եպիսկոպոս Չիլինկիրյանի հուշագրությունը¹⁴:

Ե. Չիլինկիրյանը սերտ կապեր է ունեցել հայ ազգային-քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Նրա հուշագրությունը հավաստի տեղեկություններ է պարունակում Բիթլիսի նահանգում տեղի ունեցած դեպքերի, և հատկապես Աղբյուր Սերոբի գործունեության վերաբերյալ:

1894-1896 թթ. Վասպուրականում ՀՅԴ ծավալած գործունեության մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում Սիմոն Վրացյանի խմբագրած «Խանասորա Վարդան» հուշագրությունը¹⁵:

Այդ հուշագրությունը, կարելի է ասել, հրատարակված թերևս միակ վավերագրությունն է, որտեղ ներկայացված են դրվագներ Շատախի 1896 թ.-ի ինքնապաշտպանական մարտերից:

ՀՅԴ գործունեության վերաբերյալ արտերկրում լույս տեսած աշխատություններից պետք է գնահատել Մ. Վարանդյանի գործը¹⁶:

Իր երկհատոր ուսումնասիրության մեջ նա առաջին անգամ փորձ է արել ներկայացնել ՀՅԴ պատմությունը սկզբնավորումից մինչև 1912 թվականը: ՀՅԴ հետ կապելով հայ ազգային-ազատագրական պայքարի գլխավոր իրադարձությունները, ներկայացնելով նրա ընտրած մարտավարությունը՝ Մ. Վարանդյանը, սակայն, դեպքերին չի մոտենում քննական-վերլուծական մեթոդաբանությամբ: Այն տպավորությունն է ուզում ստեղծել, որ ՀՅԴ գործունեությունն ամբողջովին ճիշտ էր և գերձ որևէ սխալներից ու վրիպումներից:

Հ.Յ. Դաշնակցության մարտավարության, դրանցում առկա ուղղությունների արդյունավետության, Դուրան-Բարձրավանդակում գործող նշանավոր գործիչների գործունեության մասին լայն պատկերացում է տալիս Կ.Սասունու աշխատությունները¹⁷:

¹³Տե՛ս Արամայիս, Վնասակարը, Թիֆլիս, 1907, Գաղափարի ճանապարհին, հ. 1, Թիֆլիս, 1909:

¹⁴Տե՛ս Չիլինկիրյան Ե., Փնջիկ բարոյական առաձներու և յիշատակ առաջնորդութեան, Երուսաղեմ, 1926:

¹⁵Տե՛ս Վրացեան Ս., Խանասորա Վարդան, Երևան, 1992:

¹⁶Տե՛ս Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցության պատմութիւն, Երևան, 1992:

¹⁷Տե՛ս Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, պատմագրեց Կ. Սասունի, Պէյրուֆ, 1956, Հրայրի դերը ազատագրական շարժման մեջ (ակնարկ մը անոր յեղափոխական նկարագրի վրա), Պէյրուֆ, 1904, Գևորգ Չաուշ (կենսագրական գիծեր), Փարիզ, 1939:

Ուշագրավ գործ է Լ. Չորմիսյանի աշխատությունը: Հեղինակը նշում է, որ հայ ազատագրական պայքարն արդյունավետ ավարտ կունենար, եթե հայ քաղաքական կուսակցությունները մասնակի ձեռնարկների փոխարեն ձեռնամուխ լինեին ժողովրդին զինելու և ընդհանուր ապստամբություն մղելու աշխատանքներին¹⁸:

ՀՅԴ մի շարք գործիչների գործունեության վերաբերյալ համառոտ տեղեկություններ է պարունակում Գ. Լազյանի «Յեղափոխական դեմքեր» աշխատությունը¹⁹:

Հայ ազգային-ազատագրական պայքարում ՀՅԴ նախաձեռնությամբ տեղի ունեցած մարտական գործողությունների մասին հարուստ նյութեր է պարունակում Ա. Նորյանի «Դրագներ Հ.Յ. Դաշնակցության գործունեութիւնից Ա», իր իսկ բնորոշմամբ փաստագրական գիրքը: Ա. Նորեանը դասակարգում է ՀՅԴ գործունեությունը և միաժամանակ փորձում հիմնավորել պայքարի ձևերն ու մարտական գործողությունների մարտավարությունը²⁰:

ՀՅԴ գործունեության ուսումնասիրության համար արժեքավոր նյութեր են պարունակում Հ. Տասնապետյանի աշխատությունները: Իր առաջի աշխատությունում հեղինակը ներկայացնում է Հ.Յ. Դաշնակցության համառոտ պատմությունը, նրա կազմությունից (1890), մինչև Հայաստանի Հանրապետության ստեղծումը (մայիս 1918): Իր հեղինակած երկրորդ աշխատությունում համառոտ անդրադառնում է Դաշնակցության իրականացրած մարտական գործողություններին²¹:

Արտերկրում լույս են տեսել բազմաթիվ աշխատություններ, որոնք վերաբերվում են ՀՅԴ անվանի գործիչների գործունեությանը, բայց քանի որ հայեցակարգային մոտեցումների մշակման առումով թույլ են, հարկ չենք համարում առանձնացնել:

Թե՛ Սփյուռքում, թե՛ Խորհրդային Հայաստանում և թե՛ հետխորհրդային շրջանում 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ազատամարտի վերաբերյալ լույս են տեսել բազում այլ աշխատություններ, որոնք նույնպես օգտագործել ենք ատենախոսության մեջ:

Հասկանալի է, որ խորհրդային շրջանում հրատարակված աշխատությունները չեն կարող ներկայացնել ազատագրական պայքարում ՀՅԴ առաջնորդող դերակատարությունը: Ընդհակառակը, տեղի տալով պաշտոնական գաղափարա-խոսությանը, մի շարք պատմաբաններ, խեղաթյուրելով ու գլխիվայր ներկայացնելով փաստերն ու երևույթները, վարկաբեկում էին ազատագրական պայքարը՝ մասնավորապես հայդուկային շարժումն ու ազատագրական պայքարի առաջնորդների ու նվիրյալների գործունեությունը:

Տուրք տալով տիրապետող գաղափարախոսությանը՝ ծայրահեղության մեջ է ընկնում Լեոն²²:

Նա քաղաքական կուսակցությունների դերը և գործունեությունը դիտարկելով լոկ որպես եվրոպական միջամտության հասնելու գերնպատակ, թերագնահատում է

¹⁸Տե՛ս Լ. Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Բ, 1878-1908, Պէյրոս 1974:

¹⁹Տե՛ս Լազյան Գ., Յեղափոխական դեմքեր (մտավորականներ, հայդուկներ), Գահիրե, 1945:

²⁰Տե՛ս Նորեան Ա., Դրագներ Հ.Յ. Դաշնակցութեան գործունեութիւնից, Բօստոն, 1945:

²¹Տե՛ս Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնն իր կազմութենն մինչև Ժ Ընդհանուր ժողով (1890-1924), Աթէնք, 1988, Հ.Յ. Դաշնակցութեան հեղափոխական-մարտական գործունեութիւնը, Պէյրոս, 1994:

²²Տե՛ս Լեօ, Անցեալից, հուշեր, թուղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, տե՛ս նույնի՝ Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, հ. Բ, Փարիզ, 1935:

ազատագրական պայքարի անհրաժեշտությունն ու կարևորությունը: Նա հայոց ջարդերն անգամ պայմանավորում է այդ կուսակցությունների գործունեությամբ:

Ծ.Աղայանի մոտ կա մի այնպիսի միտում, որ հեղինակն ամեն կերպ փոճում է ազատագրական պայքարն ու նրա նվիրյալներին առանձնացնել ՀՅԴ կուսակցությունից²³:

Ծ.Աղայանը՝ նկարագրելով հայ ժողովրդի ազատագրական պայքարը, միաժամանակ ցույց է տվել մեծ տերությունների դավադիր վերաբերմունքը դրա նկատմամբ: Սակայն նա ոչ ճիշտ ելակետ է ընտրել ազատագրական պայքարը գնահատելու համար: Բոլոր այն ձեռնարկները, որոնցում ՀՅԴ դերը չի կարողացել ժխտել, քննադատել է, իսկ շատ գործողություններ, որոնք դարձյալ կազմակերպված էին այդ կուսակցության կողմից (Անդրանիկի, Սերոբի և այլոց գլխավորությամբ), գովերգում է: ՀՅԴ գործունեությունը նա հակադրում է հայոց շահերին:

Հայկական հարցի լուծման Դաշնակցության մոտեցումներին նորովի է փորձել անդրադառնալ ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանը: Նա խորհրդային դպրոցի այն պատմաբաններից էր, որ հայ ազատագրական պայքարի գլխավոր դրոշակակիրը համարեց Հ.Յ. Դաշնակցությանը²⁴:

Քննադատական վերլուծության ենթարկելով Հայկական Հարցի նկատմամբ ռուսական հասարակական-քաղաքական ուղղությունների ու պատմագիտության տարբեր սերունդների ներկայացուցիչների արտահայտած տեսակետները, ցարիզմի դրսևորած քաղաքականության վերաբերյալ ուշագրավ և գիտականորեն փաստարկված եզրահանգումներ է կատարում Մ. Մուրադյանը²⁵:

Ազատագրական պայքարի ճանապարհը իր բուռն և հակասական զարգացման ընթացքով ներկայացնում է Հր. Սիմոնյանը: Նա առավել մանրամասն ու փաստարկված վերլուծում և նկարագրում է ազատագրական պայքարի կարևորագույն էտապներն ու դրվագները, միաժամանակ գնահատում հայ ազգային-քաղաքական կուսակցությունների, ինչպես նաև գործիչների դերը²⁶:

Արժեքավոր է Ա. Համբարյանի «Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում 1898-1908 թթ.» աշխատությունը: Ա. Համբարյանի աշխատությունում հատկապես գնահատելի են մի շարք հարցերի, մասնավորապես ֆիդայիների գործունեության վերաբերյալ նրա անկողմնակալ մոտեցումն ու գնահատականը²⁷:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի ազգային-ազատագրական պայքարն առանց ՀՅԴ ունեցած դերի գնահատման է ներկայացրել Կ. Թառոյանը²⁸:

Հ. Պողոսյանի աշխատությունները տալիս են Սասունի և Վասպուրականի պատմությունները: Հայտնի է, որ այս երկու շրջանները Արևմտյան Հայաստանում ՀՅԴ

²³Տե՛ս Աղայան Ծ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976:

²⁴Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Երևան, 1995:

²⁵Տե՛ս Մուրադյան Մ., Հայկական հարցը և ռուսական հասարակական-քաղաքական ու պատմագիտական միտքը, Երևան, 1988:

²⁶Տե՛ս Սիմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, Երևան 1996, նույնի՝ Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք 1, 2, Երևան, 2003, 2004:

Տե՛ս Համբարյան Ա., Ազատագրական շարժումնորը Արևմտյան Հայաստանում 1898-1908թթ., Երևան, 1999:

²⁸Տե՛ս Թառոյան Կ., Արևմտյան Հայաստանը, արևմտահայերի սոցիալ-քաղաքական վիճակը և ազատագրական պայքարը սովյանական Թուրքիայի բռնապետության դեմ, Երևան, 2001:

գործունեության կենտրոնավայրերից են: Հ. Պողոսյանը, ներկայացնելով Սասունում և Վասպուրականում տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերը, չի անդրադառնում ու չի գնահատում ինքնապաշտպանության կազմակերպման գործում Հ.Յ. Դաշնակցության դերին²⁹:

Հայ ազատագրական պայքարում Հ.Յ. Դաշնակցության դերի նսեմացման տրամաբանությամբ է զարգանում Ս. Պողոսյանի աշխատությունը³⁰:

Այդ աշխատությունում նա նույնիսկ անտեսում է մի շարք անվանի ֆիդայիների Հ.Յ. Դաշնակցության անդամ լինելու իրողությունը: Հ.Յ. Դաշնակցության դերի նսեմացման մտայնությամբ է շարադրված Ս. և Կ. Պողոսյանների մյուս աշխատությունը³¹:

Խորհրդային Միության փլուզումից հետո հայ պատմագրության կողմից փորձ արվեց վերագնահատել ազատագրական պայքարի շատ դրվագներ, դրանում գնահատել Հ.Յ. Դաշնակցության դերը: Պետք է նշել, որ դարձյալ առկա են ոչ անաչառ, իսկ երբեմն էլ ծայրահեղ, իրարամերժ տեսակետներ ու մոտեցումներ:

Հայրենական պատմագրության վերջին շրջանում ստեղծված գնահատելի ուսումնասիրություններից են Ա. Ներսիսյանի աշխատությունները³²:

Նա առաջիններից մեկն էր, որ փորձեց նորովի գնահատել հայ ազատագրական պայքարը, նրանում ՀՅԴ ունեցած դերը: Անդրադառնալով ՀՅԴ մարտավարության ուղվածություններին, նա փորձել է այն հայեցակետը մշակել, որ դրանցում ամենաարդյունավետը ընդհանուր ապստամբության կազմակերպման մարտավարությունն էր, որը ընդհանրության հասավ կուսակցության մեջ 1904 թ.-ից հետո միայն:

Հայրենական պատմագիտության գնահատելի խոսք է Գ. Խուդինյանի «Հ.Յ. Դաշնակցության քննական պատմություն» աշխատությունը: Հեղինակը պատմաքննական մոտեցմամբ է ներկայացնում է ՀՅԴ ձևավորումն ու գաղափարական սկզբունքները, ընդամին խորությամբ ներկայացնում է ՀՅԴ ձևավորման գործընթացը և քննության ենթարկում Հայաստանի և միջազգային կացությունը³³:

Արդի պատմագրության մեջ իր ուրույն տեղն ունի Համլետ Գևորգյանը, ով իր աշխատություններում ՀՅԴ անցած ուղին ու գործունեությունը՝ նրա մշակած ռազմավարություններն ու դրանց արդյունավետ ու ծախսողված դրվագները ներկայացնում է ճշգրիտ վերլուծության ու բազմաթիվ աղբյուրների համադրման մեթոդով³⁴:

²⁹Տե՛ս Պողոսյան Հ., Սասունի պատմություն, Երևան, 1985, տե՛ս նույնի Վասպուրականի պատմությունից, Երևան, 1988:

³⁰Տե՛ս Պողոսյան Ս. Կ., Գոյատևման պայքարի քառուղիներում, Երևան, 1989:

³¹Տե՛ս Պողոսյան Ս., Պողոսյան Կ., Ինձ բախ տվեք, Երևան, 1990:

³²Տե՛ս Ներսիսյան Ա., Գևորգ Չավուչի սպանության առեղծվածը, Երևան, 1992, նույնի՝ Ազգային-ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908թթ., Երևան, 1999, Ռուբեն, Երևան, 2002, 2003, 2007, Ավետիք Սահակյան (Հայր Աբրահամ), թե՛սն, 2003, Կարո Սասունի, Երևան, 2004, Զորավոր Սեպուհ, Երևան, 2005:

³³Տե՛ս Խուդինյան Գ., Հ.Յ. Դաշնակցության քննական պատմություն, Երևան, 2006:

³⁴Տե՛ս Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատմից, Երևան, 2012:

Ուսումնասիրության փորձաքննությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը հրապարակվել է հեղինակի վեց հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել և դրական եզրակացությամբ հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, հստակեցված հետազոտության ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները, նպատակն ու խնդիրները, ներկայացված են աշխատանքի գիտական նորոյթը, հիմնախնդրի սկզբնաղբյուրների և գիտական գրականության վերլուծությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «Հայ Հեղափոխական Դաշնակցության ծնունդը և առաջին քայլերը ըստ «Դրոշակ»-ի», բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Հայ հեղափոխականների ձևավորումը: «Դրոշակ»-ի հիմնումը»,

քննության է առնվում 1880-ականների վերջին արևմտահայ ազատագրական պայքարի շուրջ հայկական տարբեր հեղափոխական կազմավորումների հեղափոխական խմորումները Անդրկովկասում և մասնավորապես՝ Թիֆլիսում, որոնք բերեցին նոր կուսակցության, սկզբում՝ Հայ Հեղափոխականների, ապա՝ Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության հիմնմանը (1890 թ.) Ներկայացվում է կուսակցության մանիֆեստը, որը հետագայում տպագրվում է «Դրոշակ»-ում, ներկայացվում են կուսակցության առաջամարտիկներն ու առաջնորդները՝ Քրիստափոր Սիքայեյան, Սիմոն Զավարյան և Ստեփան Զորյան (Ռոստոմ): Այս ներկայացվում է «Դրոշակ»-ի հիմնումն ու առաջին համարները որոնցում առանձնացված էին արտաքին և ներքին տեսության բաժիններ: Առաջինի նպատակն էր ընթերցողին պարբերաբար ծանոթացնել եվրոպական հասարակական կարծիքին և դիվանագիտական տրամաբանությանը տաճկահայերի դրության վերաբերյալ և երկրորդը ներկայացնել Երկրի ներսում տիրող իրավիճակն ու ժողովրդական տրամադրությունները:

Երկրորդ ենթագլխում՝ «ՀՅԴ առաջին Ընդհանուր Ժողովը և առաջին ծրագրի ընդունումը»,

ներկայացվում է 1892 թ. աշնանը տեղի ունեցած ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովը, որտեղ պայքարի առաջնային միջոց է հաստատվում ժողովրդի զինումն ու մարզումը և մերժվում է ընդհանուր ապստամբության կազմակերպման, անհատան տեռորի գաղափարը: Հաստատվում է կուսակցության ապակենտրոն կառուցվածքը, կուսակցության ծրագրային, տակտիկական և աշխարհաքաղաքական հարցերը քննարկվել են բավականին հպանցիկ, քանզի ուսումնական մասի ղեկավարներն իսկ, տարված լինելով կովի հրատապ հոգսերով, ժամանակշունչինքնության ենթարկել ծրագրի և աշխարհայացքի խնդիրները:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «1894-1898 թթ. Արևմտահայ ազատագրական պայքարի արտացոլումը «Դրոշակ»-ի էջերում»,

բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխը՝ «Սասունի 1894 թ. ինքնապաշտպանության գնահատականները»,

այստեղ համադրական-վերլուծական մեթոդով ներկայացվում է Սասունի 1894 թ. ինքնապաշտպանությունը, համադրելով «Դրոշակ»-ի առատ տեղեկություններն ու հարուստ նյութը այլ հեղինակների աշխատությունների հետ, վերլուծություններ է կատարվում պայքարի կազմակերպման բացթողումների շուրջ,

ներկայացվում Սասունի գյուղերի կոտորածն ու կորուստները: Ապա անդրադարձ է կատարվում 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծագրին և նրա չիրականացման պատճառներին:

Երկրորդ ենթագլուխը՝ «Զեյթունի ապստամբությունը (1895-1896) և Վանի ինքնապաշտպանությունը (1896 թ.) ըստ «Դրօշակ»-ի»: Այստեղ ներկայացվում է Զեյթունի հերոսական ապստամբությունը, որը չնայած նրան, որ Դաշնակցության պատմության մաս չի կազմում, որպես այդպիսին լինելով Հնչակյան կուսակցության գործունեության արդյունք կամ հետևանք սակայն այն այս ժամանակաշրջանի ամբողջական պատկերը կազմող կարևորագույն դրվագներից է: Եվ այստեղ ևս ներկայացված է «Դրօշակ»-ի անդրադարձը այս դեպքերին:

Երրորդ ենթագլուխը՝ «Հարձակողական գործողությունների ներկայացումը (Օսմանյան բանկի գրավումը, Սամաթիայի կռիվներն ու Խանասորի արշավանքը)»: Քննության է առնվում Դաշնակցության պատմության ամենաաղմկահարույց դրվագներից մեկը՝ Օսմանյան բանկի գրավումը (1896 թ.), որը լայն արձագանք է գտնում ոչ միայն «Դրօշակ»-ում, ոչ միայն որջ Թուրքիայում, այլ ամբողջ եվրոպական մամուլում: Քննարկվում է այդ ձեռնարկի կազմակերպչական աշխատանքները, բացթողումներն ու ի վերջո ձախողումը: Ներկայացվում է նաև Սամաթիոյի կռիվները, որոնք պիտի լինեին Օսմանյան բանկի գրավմանը հաջորդող մյուս հուժկու հարվածը, որը սակայն, չունեցավ այդ նշանակությունը: Անդրադարձ է կատարվում Խանասորի վերժխնդրական արշավանքին, որի արդյունքում պատժվում է քրդական Մագրիկ ցեղախումբը:

Չորրորդ ենթագլխում՝ «Հ.Յ. Դաշնակցության Երկրորդ Ընդհանուր Ժողովը, ընդհանուր մարտավարության փոփոխության արտացոլումը «Դրօշակ»-ում», քննության է առնվում 1898 թ. ապրիլից հոնիս ամիսներին գումարված Դաշնակցության Երկրորդ Ընդհանուր Ժողովը: Ներկայացվում է կուսակցության մարտավարության փոփոխումը՝ հայդուկային պայքարից անցում դեպի ընդհանուր ապստամբության կազմակերպում: Ժողովը որոշում է առժամանակ հրաժարվել տեռորի գաղափարից, կապեր հաստատել ասորիների հետ, մակեդոնացիների հետ, շարունակել բանակցությունները Երիտասարդ Թուրքերի հետ, բանակցություններ սուլթանի ներկայացուցչի հետ: Որոշվում է խոշոր ձեռնարկների պատասխանատվությունը հանձնել Պատասխանատու Մարմիններին:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «1898-1908 թթ. Արևմտահայ ազատագրական պայքարի արտացոլումը «Դրօշակ»-ում», բաղկացած է յոթ ենթագլխից:

Առաջին ենթագլուխը՝ ««Դրօշակ»-ի անդրադարձը սուլթանի կառավարության և Դաշնակցության միջև բանակցություններին, դրանց նպատակներին ու ձախողման պատճառներին, այլազգիների հետ համագործակցության մասին», քննության է առնում բանակցությունները սուլթան Աբդուլ Համիդի ներկայացուցիչներ՝ սկզբում Տիրան բեյ Տատեանի, ապա՝ Արթին փաշայի և Դաշնակցության միջև, որոնք ի սկզբանե դատապարտված էին, քանզի սուլթանի նպատակը հայերին ամեն գնով ապստամբական գործելաճից հետ պահելն էր, առանց հայության կենսական կարիքների և պահանջների բավարարման: Ներկայացվում է նաև «Պրո Արմենիա» թերթի հիմնումը Փարիզում (1900 թ.), որն տպագրվում են եվրոպական հայտնի մտավորականների հայանպաստ հոդվածները: Սուլթանի հետ բանակցությունների ձախողումից հետո

Դաշնակցությունը փորձում է համագործակցել սուլթանի կառավարության ընդդիմադիր տարրերի՝ Երիտասարդ թուրքերի՝ ի դեմս տեսական պարագլուխ Ահմեդ Ռիզայի հետ՝ համատեղ ուժերով սուլթանի կառավարությունը տապալելու համար: Այդ նպատակով համագործակցության փորձեր են արվում նաև քրդերի, ասորիների հետ, սակայն ապարդյուն, քանզի այդ տարրերը քաղաքական հասունության շատ ավելի ցածր մակարդակի վրա էին գտնվում:

Երկրորդ ենթագլխում՝ «Դաշնակցության կողմից որպես պայքարի միջոց հայդուկային կռիվների և ընդհանուր ապստամբության կազմակերպման համատեղելու փորձերի մասին», ներկայացվում է այդ երկու մարտավարությունների համադրումը, որն ըստ «Դրոշակ»-ի հնարավոր է և անհրաժեշտ քանզի արևմտահայության հեղափոխության հարցը պետք է լուծել հեղափոխության միջոցով, որը կարելի է առաջացնել միայն խմբակային, պարտիզանական կռիվներ կազմակերպելու ճանապարհով, իսկ քարոզել ժողովրդին հեղափոխություն և տեղից չջարժվել, նշանակում է դատապատել նրան հավերժ ստրկության: Սակայն հետագայում Դաշնակցությունը հրաժարվում է հայդուկային պայքարից, համարելով այն անարդյունավետ ու կորստաբեր և լիովին անցնում ընդհանուր ապստամբության կազմակերպմանը: Ներկայացվում է Աղբյուր Սերոբի մահը, Առաքելոց վանքի կռիվները, «Փոթորիկ»-ի գործը ըստ «Դրոշակ»-ի:

Երրորդ ենթագլխում՝ «Ընդհանուր ապստամբության կազմակերպման բարդությունները, զենքի տեղափոխման դժվարությունները 1901-1903 թթ. Ընթացքում և այդ պլանի ձախողման պատճառներն ըստ «Դրոշակ»-ի», քննության է առնվում ընդհանուր ապստամբության կազմակերպման երկրորդ շրջանի՝ 1901-1903 թթ. բարդությունները, զենքի տեղափոխման դժվարությունները, որոնք իրականացվում էին 1. Խաղաղ և անաղմուկ, փոքր խմբերով, 2. Զինատար խմբերի միջոցով, որը վերածվում էր հայդուկային արշավանքի և զենքի մեծ մասը չէր հասնում նպատակին:

Չորրորդ ենթագլուխը՝ «Սասունի 1904 թ. ինքնապաշտպանության մասին», փաստերի համադիր քննության է ենթարկում ազատագրական պայքարի ամենաողբերգական էջերից մեկը՝ Սասունի 1904թ. ինքնապաշտպանությունը, որում ներգրավված էին ազատագրական պայքարի բոլոր հայտնի գործիչները: Թեպետ Դաշնակցությունը պատրաստվել էր Սասունի ինքնապաշտպանությանը, սակայն հարձակումը լինում է շատ ավելի շուտ (մարտ-ապրիլ), քան սպասվում էր (ամռանից ոչ շուտ): Սասունի կռվողների թիվը կազմում էր մոտավորապես 1000 հոգի, որի դիմաց թշնամին 9-10000 զիվվորներ ու ոստիկաններ և քրդեր՝ 5-7000: Ուժերի այս հարաբերակցությունը, հայկական կողմի թույլ տված սխալներն ու թերացումները լուծում են Սասունի ճակատագիրը, որի (Գելիզուզան, Շենիք, Սեմալ, Ալիանք, Կելեմսուր, Կելիեկուզան) գյուղերը սրի են քաշվում ու այրվում:

Հինգերորդ ենթագլուխը՝ ««Դրոշակ»-ի անդրադարձը սուլթանի ահաբեկման փորձին» նվիրված է Դաշնակցության պատմության ամենահետաքրքրական դրվագներից մեկի՝ սուլթանի ահաբեկման պատրաստություններին (որը ծրագրված էր դեռևս 1901 թ.), իրականացման դժվարություններին և ի վերջո փորձի ձախողմանը: Այս ձեռնարկի հիմնական կազմակերպիչներն էին՝ Քրիստափոր Միքայելյանը, Սաֆոն (Մարտիրոս Մարգարյան), Սև Աշոտը (Աշոտ Եղիկյան) և Հովհաննես Դավթյանը: Քրիստափորը այս ձեռնարկին նվիրեց իր եռանդը, տաղանդը, ինչպես նաև կյանքը

(Բուլղարիայում ռումբի փորձարկման ժամանակ նա զոհվում է 1905 թ. մարտի 17-ին): Սակայն ձեռնարկը իրականացվում է առանց նրա, 1905 թ. հուլիսի 21-ին: Ռումբերով բեռնված սայլը պայփեցվում է սուլթանի պալատի առաջ, սակայն նա ողջ է մնում, մի քանի հանգամանքների փոփոխման շնորհիվ: Այս ձեռնարկը ևս չի տալիս սպասելի արդյունք, ոչ ժողովրդի վիճակը բարելավելու, ոչ եվրոպական քաղաքականության ուշադրությունը գրավելու առումով:

Վեցերորդ ենթագլխում՝ ««Դրօշակ»-ը Արևմտյան Հայաստանում 1906-1908 թթ. իրադարձությունների մասին» ներկայացվում է երկրում տիրող օրհասական դրությունը, օր-օրի ավելացող հալածանքները, թալանն ու ունեցրկումը ևնան հայդուկային պայքարից իսպառ հրաժարվելու Դաշնակցության որոշումը: 1907թ. Վիեննայում գումարվում է Դաշնակցության չորրորդ Ընդհանուր ժողովը, որտեղ կուսկցությունը ծանր դրության մեջ է հայտնվում, քանզի դեռևս 1904 թ. «Կովկասյան նախագծի» հաստատմամբ Դաշնակցությունը ստանձնում է նաև արևելահայության շահերի պաշտպանությունը, որը պիտի դառնար ընկերվարային, ինչն էլ առաջացնում է արևմտահայության բոլոր շրջանակների խոր դժգոհությունը: Սակայն ժողովն ի վերջո ընդունեց և վավերացրեց Կովկասյան գործունեության նախագիծը և հաստատեց թուրք և քուրդ տարրերի հետ համերաշխություն հաստատելու անհրաժեշտությունը, որն առաջացնում է թուրքական կառավարության դժկամությունն ու անհանգստությունը: 1907 թ. տեղի է ունենում հայդուկային վերջին կոիվներից մեկը՝ Սուլվիսի կոիվը, որտեղ սպանվում է նշանավոր հայդուկներից Գևորգ Չաուշը:

Յոթերորդ ենթագլխում՝ ««Դրօշակ»-ը Թուրքիայի 1908 թ. Սահմանադրության ընդունման և Դաշնակցության ռազմավարության ու մարտավարության փոփոխման մասին», քննության է ենթարկվում Դաշնակցության համագործակցության փորձերը սուլթանի կառավարությունից դժգոհ՝ Երիտասարդ Թուրքերի հետ, ապա համատեղ հայ-թուրքական ցույցեր են տեղի ունենում Վանում, Բիթլիսում Էրզրումում: 1908 թ. ընդունվում է Օսմանյան սահմանադրությունը: Դաշնակցությունը հայտարարություն է տարածում «Դրօշակ»-ում, որով հայտնում է իր անվերապահ պաշտպանությունը ու նվիրումը թուրքական սահմանադրությանը: Ի վերջո անվերապահորեն հավատալով այս սահմանադրությանը Դաշնակցությունը կատարում է շրջադարձային փոփոխություն իր ռազմավարության ու մարտավարության մեջ, հրաժարվելով ժողովրդին զինելու և պայքարի պատրաստելու գործելակերպից, անցնում է սահմանադրության գործադրման ու խաղաղ ճանապարհով բարենորոգումների հաստատման մարտավարությանը, որն էլ ճակատագրական նշանակություն է ունենում ժողովրդական դիմադրական ուժի անկման պարագայում:

ԵՐՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ: Առենախոսության հիմնական դրոյթներն ու արդյունքները ամփոփված են հետևյալ եզրակացություններում

1. Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնական օրգան «Դրօշակ»-ը հանդիսանում է 19-րդ դարեվերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային ազատագրական պայքարի ամենակարևոր սկզբնաղբյուրներից մեկը:

2. Նրա էջերից մենք կարևորագույն տեղեկություններ ենք քաղում Հայ Յեղափոխական Դաշնակցության ստեղծման՝ նրանում առկա գաղափարական ուղղվածությունների, որդեգրած ռազմավարական և մարտավարական ծրագրերի մասին:

3. ՀՅԴ ծրագիրը եղել է բազմաշերտ և ձևավորվել է մարքսիստական, նարոդ-նիկական, հայդուկային-ահաբեկչական դրոյթների համադրությամբ:

4. «Դրօշակ»-ի էջերի ընթերցումից այն ճշգրիտ տպավորությանն ենք հանգում, որ 1890-1895 թթ., փաստորեն, հանդիսանում են կուսակցության կազմակերպչական կառույցների ձևավորման շրջան: Այդ թվականներին ՀՅԴ-ն իր կազմակերպչական կառույցներն է ձևավորում Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում:

5. Կուսակցության շարքերում ընդգրկում էր արևմտահայ ազդեցիկ գործիչների (Հրայր Դժոխք, Աղբյուր Սերոբ, Վազգեն, Վարդգես, Կոմս և այլոք), ովքեր իրենց հեղինակությամբ և խոհեմ գործելակերպով Արևմտահայաստանն ու արևմտահայությանը հոգեհարազատ էին դարձնում Դաշնակցությունը, իսկ Դաշնակցությանը՝ արևմտահայությունը:

1890-ական թթ. կեսերից, համաձայն «Դրօշակ»-ի տեղեկությունների, ՀՅԴ-ն որպես ազատագրական պայքարի հիմնական մարտավարություն ընտրել է հայդուկային պայքարը: Արևմտահայ հայդուկները՝ (Վազգենը, Վարդգեսը, Աղբյուր Սերոբը, Հրայրը, Գևորգ Չառուզը, Անդրանիկը, Նիկոլ Դումանը, Լևոն Նևրուզը, Սև Աշուտը, Քեռին, Մորաղը, Վահանը և շատ ու շատ այլ հայդուկներ), թեպետ հանդիսացել են իրենց ընտրած պայքարի ուղու անմնացորդ նվիրյալները, բայց ընդհանուր առմամբ պայքարի այդ մարտավարությունը եղել է սակավարդյունք:

6. Թեև շատ հայդուկային խմբեր՝ Աղբյուր Սերոբի խումբը, Արամ Արամյանի խումբը, Վանում գործող Պետոյի խումբը և այլն կարևոր դերակատարություն են ունեցել արևմտահայ հիշյալ շրջանների հայ ազգաբնակչության ինքնապաշտպանության կազմակերպման գործում, բայց վերջնարդյունքում ՀՅԴ-ն նման գործելակերպի որդեգրումով չի կարողացել հասնել իր որդեգրած նպատակի իրականացմանը:

7. «Դրօշակ»-ի տեղեկությունները այն հետևությանն են բերում, որ Դաշնակցություն կուսակցությանն անդամագրված արևմտահայ խոհեմ գործիչները՝ Հրայր Դժոխքի գլխավորությամբ, ձգտել են կուսակցության գործունեությունից հանել հայդուկային պայքարի մարտավարությունը և կուսակցության ողջ գործունեությունը կենտրոնացնել գաղտնորեն զինման և ժողովրդի ընդհանուր ապստամբության կազմակերպման ուղղությամբ: 19-րդ դարի 90-ական թթ. հերոսական հայդուկային ինքնապաշտպանական կռիվները մեկ անգամ ևս ապացուցեցին որ մարտավարական այս ուղին արդյունավետ չէր:

8. «Դրօշակ»-ի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ինչպես Հնչակյան կուսակցությունը, այնպես էլ ՀՅԴ-ն մասնակի բնույթի կռիվներ և ահաբեկչական գործողություններ են կազմակերպել հաճախ այն թյուր համոզմունքից ելնելով, որ դրանցով կգրավեն եվրոպական տերությունների ուշադրությունը հայկական հարցի վրա, և վերջիններիս ճնշմամբ Թուրքիան կգնա Արևմտյան Հայաստանի բարենորոգումների ծրագրի իրականացմանը: Սասունի 1894 թ. ողբերգական իրադարձություններից հետո եվրոպական տերությունները Թուրքիային պարտադրեցին Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, որը չիրականացավ, ավելին՝ Թուրքիան գնաց արևմտահայության առաջին մասսայական ջարդերին:

9. Արդեն 1898 թ. երկրորդ ընդհանուր ժողովից հետո Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը փոխեց իր մարտավարությունը՝ հայդուկային պայքարից անցում կատարելով ընդհանուր ապստամբության կազմակերպմանը:

Չնայած երկրորդ ընդհանուր ժողովի որոշմանը Դաշնակցությունը ինքնաբերաբար մինչև 1904 թ. շարունակում էր գործել ընդհանուր ապստամբության կազմակերպան, գաղտնի գինման և հայդուկային պայքարի զուգորդությամբ:

10. 20-րդ դարասկզբին ՀՅԴ կուսակցության հայդուկային պայքարի և ընդհանուր ապստամբության կազմակերպման զուգորդության գործունեությունը այն արդյունքն ունեցավ, որ ձախողվեց 1905 թ. ամռանը նախատեսված ընդհանուր ապստամբության պլանը, ըստ որի Սասունը, Տարոնը, Բիթլիսը (մասնավորապես Ախլաթը) և Էրզրումի որոշ շրջաններ պիտի պատրաստվեին ընդհանուր ապստամբությանը, որի ընթացքում նախատեսված էր իրականացնել Աբդուլ Համիդի տեռորը:

11. 1904 թ. Սասունի ինքնապաշտպանությունը ձախողվեց, որից հետո այնտեղից հեռացան բոլոր հայդուկները՝ Անդրանիկի գլխավորությամբ, և դրանով փաստորեն իր ավարտը գտավ հայ ազգային ազատագրական պայքարի հայդուկային ուղղությունը:

1904 թ.-ից ՀՅԴ Արևելյան բյուրոն իր գործելաոճից կտրուկ կերպով հանեց հայդուկային պայքարը, որի միակ ողբեգական և հերոսական կերպարը մնաց Գևորգ Չաուշը, ով չկարողացավ հրաժարվել իր գործելաոճից, որն այլևս հակասում էր ընդհանուր կուսակցության որդեգրած նոր մարտավարությանը:

Փաստորեն 1904 թ. Սասունի դեպքերով փակվում է հայ ազգային ազատագրական պայքարի մի բարդ և հակասական ժամանակաշրջան:

12. Դաշնակցության կողմից Աբդուլ համիդի ահաբեկմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների ժամանակ իր մահկանացուն է կնքում արևմտահայ ազատագրությանտուրբ գործի մեծ նվիրյալ՝ Դաշնակցության հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանը, որը սակայն չի կանգնեցնում կուսակցությանը ավարտին հասցնելու «Նժույգի» գործը: Մահափորձն ավարտվում է անհաջողությամբ, և ժողովրդական համընդհանուր վրեժը լուծելու և եվրոպական Մեծ պետությունների ուշադրությունը արևմտահայության խնդիրների վրա հրավիրելու Դաշնակցության ծրագիրը ի չիզ դարձավ:

13. «Դրօշակ»-ը տարիներ շարունակ իր բազմաթիվ համարներում շարունակելով քարոզել թուրքահպատակ ժողովուրդների համագործակցության անհրաժեշտությունը, բազմաթիվ դրվագներով անդրադառնում է սուլթանի կառավարությունից դժգոհ իթթեհատականների հետ դաշնակցականների շփումներին, և որպես հաղթական ավարտ լայն անդրադարձ է կատարում հայ- երիտթուրքական համատեղ ցույցերին, որոնք ի վերջո պսակվում են հաջողությամբ:

1908 թ. հռչակվում է Թուրքական Սահմանադրությունը, որը տապալում է Աբդուլ Համիդի ռեժիմը: «Դրօշակ»-ը մեծ ցնծությամբ է ներկայացնում այդ օրերին տիրող տրամադրությունները, ինչպես նաև մի քանի համարներում անդրադառնում է Դաշնակցության անվերապահ նվիրմանը այդ սահմանադրությանը, և արևմտահայության ազատագրության իր ծրագրում ռազմավարության ու մարտավարության փոփոխմանը: Սա կարելի է համարել Դաշնակցության ամենաաներելի սխալներից մեկը, քանզի ժողովրդի համընդհանուր զինումից հրաժարվելն ու երիտթուրքական սահմանադրությանը անվերապահ նվիրումը հղի էր աղետալի հետևանքներով հայ ժողովրդի համար, որն էլ իրեն երկար սպասեցնել չսովեց:

Ահա այս պատմագիտական հայեցակարգերի նշանակություն ունեցող եզրակացություններին ենք հանգում ուսումնասիրելով հայ 1890-1908 թթ. ազգային

ազատագրական պայքարի ընթացքը, ուսումնասիրելով «Դրօշակ»-ը, անշուշտ, այդ պարբերականի մատուցած տեղեկությունները երբեմն համադրական քննության ենթարկելով այլ սկզբնաղբյուրների մատուցած տեղեկությունների հետ:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հովսեփյան Կ., «Դրօշակ» պարբերականի առաջին տեսական ընդհանրացումներն Արևմտյան Հայաստանի կացության և ազատագրական ուղիների մասին, «Ակունք», 2017, թիվ 1(15), էջ 47-53:

2. Հովսեփյան Կ., Արևմտահայության ազատագրության խնդիրն ըստ «Դրօշակ» պարբերականի մի քանի հրապարակումների (1891 թ. սեպտեմբեր, 1892 թ. փետրվար), «Ակունք», 2017, թիվ 2(16), էջ 53-59:

3. Հովսեփյան Կ., ՀՅ. Դաշնակցության երկրորդ Ընդհանուր ժողովի նախապատրաստություններն ու կազմը, «Ակունք», 2017, թիվ 3(19), էջ 48-54:

4. Հովսեփյան Կ., Օսմանյան բանկի գրավումն ու Խանասորի արշավանքը «Դրօշակ» պարբերականի էջերում, «Регион и мир», 2024, էջ 13-20

5. Հովսեփյան Կ., Հայ-թաթարական բախումներն ու Բաքվի հայության ինքնապաշտպանության կազմակերպումն ըստ «Դրօշակ» պարբերականի, «Գիտական Արցախ» 2024, թիվ 1(20), էջ 51-62:

6. Հովսեփյան Կ., Սասունի 1904 թ.ինքնապաշտպանության կազմակերպումը «Դրօշակ» պարբերականի էջերում, «Հայագիտական հանդես» 2024, թիվ 1(64), էջ 223-237:

ОВСЕПЯН КАРИНЕ ГАГИКОВНА

**ОТРАЖЕНИЕ ЗАПОДНО-АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ
БОРЬБЫ (1890-1908 Г.) НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА "ДРОШАК"**

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 "История Армении"

Защита состоится 8-ого ноября 2024 г. в 14⁰⁰ часов на заседании Специализированного совета по Истории Армении 004КВОН РА, при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Данное исследование посвящено западно-армянской национально-освободительной борьбе с 1890-1908 г. по данным журнала "Дрошак". Диссертация состоит из введения, трёх глав, заключения, списка использованных источников и литературы. Во введении обосновывается необходимость написания диссертации, представляются её цели и задачи, источниковедческая основа и связанная с данным вопросом историография.

В первой главе диссертации под названием «Рождение Армянской Революционной партии Дашнакцутюн и его первые шаги, по данным журнала "Дрошак"», представляется политическая атмосфера конца 1880-ых годов в Закавказье. Также объединение различных революционных групп и организации вокруг освободительной борьбы Западной Армении и рождение новой партии под названием Дашнакцутюн. Также представлены основатели и руководители партии (Кристофор Микаелян, Симон Заварян, Степан Зорян), и их деятельность. Представляется первое всеобщее собрание партии и создание органа партии: под названием "Дрошак".

Вторая глава названа «Отрожение Западно-Армянской освободительной борьбы с 1894-1898 гг. в журнале "Дрошак"», подвергаются историческому анализу самые значимые фрагменты освободительной борьбы: такие, как самооборона Сасуна в 1894г., восстание Зейтуна 1895-1896 г.), самооборона Вана (1896 г.), захват

Османского банка, нашествие Ханасора. Все эти события представлены по богатым сведениям "Дрошака".

Третья глава названа «Отражение Заподно-Армянской освободительной борьбы с 1898-1908 гг. в журнале "Дрошак"», в ней представлена изменение стратегии Дашнакцутюн: переход с партизанской борьбы с участием айдуков, на организацию всеобщего восстания, потому что частные айдукские столкновения не приносили нужной пользы и вызывали массовые убийства в армянских сёлах и городах.

Также анализируются переговоры между дашнаками и представителями султана (сначала это был Тиран бей, потом его заменил Артин паша) и причины провалов этих переговоров.

Сделана ссылка на трудности перевозки оружия в Страну, на провал организации самообороны Сасуна 1904 г., и резню жителей региона, уничтожение многих сёл Сасуна.

Представлены также переговоры с Младотурками, которые были недовольны провением султана и хотели свернуть его власть, при этом сохраняя целостность Турции. Они уговаривали дашнаков отказаться от требований частных армянских реформ и европейского вмешательства и выступить вместе с ними за мирное принятие конституции. В итоге Османская Конституция была принята в 1908 году и дашнаки, поверив обещаниям Младотурков, отказались от политики вооружения народа и подготовки к всеобщему восстанию и приступили к мирному осуществлению Конституции и армянских реформ, что и стало судьбоносной ошибкой как для партии Дашнакцутюн, так и для всего армянского народа, потому как Младотурки не только не отказались от давнейшего плана султана - истребить весь армянский народ, но и сами стали исполнителями армянского Геноцида в 1915 г..

В заключении подведены итоги проведённой работы и изложены основные выводы исследования.

Reflection of the Western Armenian National Liberation Struggle (1890-1908) in the Pages of the Journal "Droshak"

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The Defense of the Dissertation will be held on November 8, 2024, at 14⁰⁰ at the Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

SUMMARY

This study is dedicated to the Western Armenian national liberation struggle from 1890 to 1908 based on the materials of the journal "Droshak." The dissertation consists of an introduction, three chapters, conclusion, list of used sources and literature. The introduction justifies the necessity of writing the dissertation, presents its goals and objectives, the source base, and the historiography related to this issue. The first chapter of the dissertation, titled "The Birth of the Armenian Revolutionary Party Dashnaksutyun and Its First Steps, according to the Journal 'Droshak,'" presents the political atmosphere of the late 1880s in the Transcaucasia. It also discusses the consolidation of various revolutionary groups and organizations around the liberation struggle of Western Armenia and the birth of a new party called Dashnaksutyun. The founders and leaders of the party (Christophor Mikaelian, Simon Zavaryan, Stepan Zoryan) and their activities are also presented. The first general assembly of the party and the creation of the party organ called "Droshak" are also discussed. The second chapter, titled "Reflection of the Western Armenian Liberation Struggle from 1894-1898 in the Journal 'Droshak,'" analyzes the most significant fragments of the liberation struggle, such as the self-defense of Sasun in 1894, the uprising of Zeitun in 1895-1896, the self-defense of Van in 1896, the seizure of the Ottoman Bank, and the invasion of Khanasor. All these events are presented based on the rich materials of "Droshak." The third chapter, titled "Reflection of the Western Armenian Liberation Struggle from 1898-1908 in the Journal 'Droshak,'" presents the change in the strategy of Dashnaksutyun: a transition from partisan warfare involving fedayeen to the organization of a general uprising because private fedayeen clashes did not bring the desired benefit and caused mass killings in Armenian villages and towns. The negotiations between Dashnaks and representatives of the Sultan (initially Tirana Bey, later replaced by Artin Pasha) and the reasons for the failures of these negotiations are also analyzed.

Reference is made to the difficulties of transporting weapons to the country, the failure of the organization of self-defense in Sasun in 1904, and the massacre of the region's inhabitants, the destruction of many villages in Sasun. Negotiations with the Young Turks are also presented, who were dissatisfied with the Sultan's rule and wanted to overthrow his power while maintaining the integrity of Turkey. They persuaded the Dashnaks to abandon the demands for private Armenian reforms and European intervention and to advocate together with them for the peaceful adoption of the constitution. As a result, the Ottoman Constitution was adopted in 1908, and the Dashnaks, believing in the promises of the Young Turks, abandoned the policy of arming the people and preparing for a general uprising and began peaceful implementation of the constitution and Armenian reforms, which turned out to be a fatal mistake for both the Dashnak Party and the entire Armenian people, as the Young Turks not only did not abandon the Sultan's longstanding plan to exterminate the entire Armenian people but also became the executors of the Armenian Genocide in 1915. The conclusion summarizes the results of the work conducted and outlines the main conclusions of the study.

A handwritten signature in black ink, appearing to be the name 'Z. A. A.', written in a cursive style.